ԱՄԵՆԱՅՆ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԻ
Պարտին ուղղուիլ առ—
Խմբագիր և Տնօրէն
«ՀԱՅՐ»ի
ՏՈՔ · Մ · Ս · ԳԱԲՐԻԷԼԵԱՆ ·

Զեռագիրք Չեն Վերադարձուիր
—Բաժանորդագրութիւնք—
Ամէն երկրաց համար
ԵՐԿՈՒ ՏՕԼԱՐ ԿԱՆԽԻԿ

ՀԱՅՐ

HAÏK
ARMENIAN POLITICAL AND HYGIENIC FORTNIGHTLY.—
EDITED BY
M. S. GABRIEL, M. D.
202 W. 23d Street, New York, U. S. A
To whom all communications must be addressed.
Terms for all Countries.
One Year - - - - $ 2.00.

ԿԻՍԱԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ

Editor—M. S. GABRIEL, M D.
Տէր-Խմբագիր—Մ · Ս · ԳԱԲՐԻԷԼԵԱՆ
202 W. 23rd St., New York City, U. S. America.

Ա · ՏԱՐԻ — ՆԻՒ ԵՈՐՔ ՍԵՊՏԵՄԲԵՐ 1 1891 — ԹԻՒ 17

Entered as second-class mail matter. at P. O. NewYork.

ՌՈՒԱՆԴԷԿՈՒԹԻՒՆ

Ի՞ՆՉ ՅՈՅՍ ԿԱՅ — Շ.ՋԼԷԲԷՐԼԱՆ Կ-ԼԻՍԼԻՅԻ Հայի· ԸՆԿԵՐԱԿՑՈ-ՐԷԱՆ — Պապասիան Ն· Ներսէ Հ· Հ· Յանձնախմբէն — Հայասիրական Մէ-ՐԻ-Ն — Կաբրալէա Յակոբեան — Խմբագրական Հրա-էր — Օգնական Վարչութեան Տէր Գ-կասովի Պապէրէն — Օգնո-որական Ընդ-նակո-ՐԻ-Ն Հայոց — Պէրո-ն Ռ-արայէլ — Նոմակ Գիլէլիայէն — Հայէր Յանդէրիա — Նոր Հրապարակո-ՐԻ-Ն — ԱՅԼԵ- ԱՅԼ:

Ի՞ՆՉ ՅՈՅՍ ԿԱՅ

ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴ ԵՒ ՄԵՐ ԳՈՐԾԻՔԻ

Ա

Շատ անգամ հարցած են մեզ հայրենակիցք այս հարցումը· ի՞նչ յոյս կայ փրկութեան, Ազգն ու Հայրենիք պիտի ազատի՞ն մօտ ատեն:

Այս յոյժ կարևոր հարց մ'է, որում հրապարակաւ պատասխանելու համար հարկ է որ իրաց և գործոց վիճակն քննենք նախ:

Տաճկաստանի Հայերէն ի՞նչ յոյս կայ: Ի՞նչ կ'ընեն նոքա ի փրկութիւն Ազգին: Մինչդեռ հօտն աւելի կը հարատահարուի բոլոր գաւառաց մէջ, հովիւներն Պարիսարքէն սկսեալ, աւելի երկչոտ և ապիկար կը դառնուին զհօտն պաշպանելու: Թերթերն, որոց կոչումն է ժողովուրդն առաջնորդել խնդիրներն ուղիղ հասկնալու և մարդիկն արդարութեամբ դատելու, մոլորեցուցիչ և շաղոքարթ տարուներու դեր կը կատարեն: «Արեւելք» թերթն ալ, որ ի գլուխ Տաճկահայ Մամլոյն կեցած էր, ծեծուեցաւ և յաղթուելով անցաւ բռնապետ թրքամիտ մեծատանց կողմն: Երկու տարի առաջ «Արեւելք» կը համարձակէր դեռ իրերն քննադատել գոնէ ազգային շրջանին մէջ, և թէչեան գրեց մի անգամ խմբագրական մի՝ «Արդիւնք չկայ» խորագրով: Ազգ· կեդր· Վարչութեան Քաղ· ժողովն յայնժամ պաշտօնական զեկուցում մ'ուղղեց առ «Արեւելք» և հրաւիրեց «նոյն լրագիրն ղգուշանալու այսպիսի հրատարակութիւններէ, որպէսզի տեղի չմնայ իրեն դէմ օրինական միջոցներ ձեռք առնելու:» Այս զեկուցումն այն ատեն մեզ թուեցաւ կարի չարագուշակ նշան, որ կը ցուցնէր ազդեցիկ ազգայնոց ոմանց ազնուապետական կամ բռնապետական միտումները, և Մամլոյն անդօրութիւն: Ժողովուրդն չկրցաւ ըմբռնել այդ զեկուցման խորին նշանակութիւնն եւ ոչ ուստեք բողոքի ձայն լսելի եղաւ: Եւ այժմ այդ զեկուցման հեղինակներուն յետագէմ գաղափարք յաղթանակ տարած են, «Արեւելք» գերի բռնուած է, Ազգ· Ընդհ· ժողովն հարուստ դասուն ափին մէջ է, Սահմանադրական անուան ներքև ամիրայապետական դրութիւնն վերածնեալ է:

Տաճկաստանի Հայերէն առ այժմ ոչ ինչ յոյս կայ:

Ռուսահայոցմէ ի՞նչ յոյս կայ: — Մեր Ռուսահպատակ հայրենակիցք աւելի գիտութիւն ունին, իրենց թերթերու մէջ գաղափարք աւելի առատ են և աւելի ճիշդ ընթերութեամբ գործել, այժերն միացուցեալ աւելի գիտան և և զինուորական կրթութիւն կ'առնուն, որոց ամենէն կը հեւանցունեմք թէ նոքա աւելի աշխատասէր են քան զմեզ և արագագոյն յառաջդիմութեան ընթացք մի կը կատարեն: Մամուլն Ռուսիայում նուազ կը բռնարարի քան ի Տաճկաստան, և իր չինիչ, վարիչ, լուսաւորիչ դերն լաւ եւս կը կատարէ:

Ուրեմն կարելի է համարել թէ Ռուսիոյ մէջ կան զգօն Հայեր որք մեր Ազգային փրկութեան խնդիրն կը սերտեն և միջոցներ կ'ուսումնասիրեն:

Ռուսիոյ Հայերէն անյոյս չեմք·

Պարսկաստանի, Հնդկաստանի, Եգիպտոսի, Եւրոպայի և Ամերիկայի Հայ Գաղթականութիւնք առհասարակ արթնցած են, Ազգին վիճակն հացի խնդրին պէս զիրենք կը զբաղեցուցէ, թերթեր կը հրատարակեն, ժողովներ կ'ընեն, կառավարութեանց ուղերձներ կը մատուցանեն, նուիրատուութիւններ կ'ընեն ի նպաստ ազգային գործիչներու և գործերու: Հարուստ վաճառականներ, մշակեալ անհատներ, եռանդուն երիտասարդներ, կարող գրիչներ կան անոնց մէջ: Ազգին փրկութեան համար գործելու փափաք, և անկեղծ փափաք, կայ շատերուն մէջ· դրամն, ժամանակն և արիւնն իսկ տալու յօժարամիտք ալ բացառութիւն չեն· բայց ի՞նչ յոյս կայ այս ամենէն: Ի՞նչ արդիւնք յառաջ եկած է ցարդ: Դրսէն երևցող արդիւնքն առ այժմ շատ պանծալի չէ: Տակաւին դրամական կարողութեան տէր դասն գործին հանդիսատես միայն է· քաղաքական գործոց և պաշտօններու մէջ հասունցած մեր հայրենակիցք չեզոք կեցած են· մեծ մասամբ պարզ գործաւոր դասն է որ աղմուկ կ'ընէ, իր լումաներն յաճախ կը չխրտացունէ, և կեցցէի աղաղակներով սրահներն կը լեցունէ:

Պարզ գործաւորաց և վերնագոյն դասուն միջև կայ նաև փոքր ի շատէ մշակեալ երիտասարդութիւն մի, որոյ մէկ ծայրն մեծատանց կը հպի ու միւս ծայրն անուս դասուն կը կցի:

Ցեղոյ քան զամենայն կը յիշեմք նաև զայնս, զորս կրնայինք նախ և առաջ յիշած լինիլ — այսինքն զայնս

որք գործիչ կը կոչուին։ Սոցա ալ մի քանին Եւրոպեան կարծիքն կը մշակեն ի նպաստ Հայ Դատին, և մի քանին Դաղթական Հայ Աշխարհին կ'առաջնորդեն։

Թողլով օտարաց խօսք ուղղող մեր գործիչներն առ այժմ, նայինք թէ ո՞վ են զմեզ առաջնորդող գործիչք։ — «Արմէնիա» կամ Փորթուքալեան և «Հնչակ։» Ո՞վ են սոքա, ի՞նչ կ'ընեն, ի՞նչ ոյժ ունին, ի՞նչ սկզբանց կը ծառայեն։ Ի մի բան, ի՞նչ յոյս կայ սոոնցմէ։

Թէ ինչ ըրած է «Արմէնիա», կրնամք մէկ խօսքով ըսել։ — Նա դաղթական Հայերուն տեղեկութիւն հաղորդած է Տաճկահայոց վիճակին վերայ, և հայրենասիրական արթնութիւն յառաջ բերելու մեծապէս օգնած է։ Հայրենասէր և մշակեալ երիտասարդք — նոքա որոց համար ըսինք թէ զգօն մեծատանց և տիմար բազմութեան միջև կը կենան — սկսան երախտագիտութեամբ դովել զ«Արմէնիա» և նպաստներ հանգանակել։ Արդիւնքն այն եղաւ որ «Արմէնիա» սկսաւ մտածել թէ ինքն դիւցազն մ'է, և յայտարարել սկսաւ թէ ընկերութիւնն զոր ինքն կազմած է, «կոչուած է Ազգն ու Հայրենիքը փրկելու։» Սկսաւ զօրանալ ի նմա կարծեաց յամառութիւն, և ինքնավստահութիւնն ուռելով յանձնապաստանութեան փոխուեցաւ։ սկսաւ ուրիշ գործիչներն յանուն հարուածել և իր լաւագոյն բարեկամաց անգամ խորհուրդն արհամարհել։

Անդիէն երևան ելաւ «ՀՆՉԱԿ»։ Սա ի սկզբան շատ ունկիդիր չունեցաւ, քանզի «Արմէնիա» տիրած էր ասպարիզին։ բայց վերջապէս կրցաւ յառաջ անցնիլ շնորհիւ իւր գաղափարաց առատութեան և աւելի խորին մտաւոր մշակութեան, և մանաւանդ շնորհիւ իւր կազմակերպիչ կարողութեան, որով յաջողեցաւ ճախող ցոյց մ'ընել կ։ Պոլսոյ մէջ։ Այս ցոյցն տեսնելով սկսան Հայերքն «Արմէնիա»էն դարձունել իրենց երես դէպ ի «Հնչակ»։ Զարմանալի թող չթուի այս։ Թուրքիոյ Հայոց վիրաւորիչ և յարձակողական կարողութիւններն մաշած են դարաւոր հպատակութեան մէջ, վասն որոյ սքանչացան, հիացան երբ տեսան թէ «Հնչակ» նոյն ինքն Սուլթանին քթին տակ յեղափոխական թափօր յօրինելով՝ դէմ ելնող կայսերական գնդերուն վերայ կրակ ըրաւ, և յետոյ մի քանի լրտեսներ ալ սպաննեց։ Այս լիովին բաւական էր անճարակ և երկչոտ հարստահարելոց երևակայութիւնն խանդավառելու։ Եթէ փրկութեան յոյս կայ, մտածել սկսան, այն ալ «Հնչակ»էն է որ կը զարնէ, ոչ թէ «Արմէնիա»էն է որ կը յորդորէ։

Կ։ Պոլսէն կը տեղեկանամք թէ այժմ հոն «Հնչակ» գրեթէ բոլորովին բռնած է «Արմէնիա»ի տեղն և Արմէնքէն ևս կը գրեն մեզթէ ընկերակցութիւնք ամանք միացած են Հնչակեան կուսակցութեան հետ։

Տեսնենք ի՞նչ յոյս կայ «Հնչակ»էն։

(Շարունակելի)

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՊԱՏՇԱՒԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱԼԿԱԹԱՅԻ ԱՌ ՀԱՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲՆ ՆԻՒ ԵՈՐՔԻ

Ընդունեցանք Կալկաթայի Հայկական Միութեան Ազգային Բաժնին Նախագահ Մեծ։ Տիար Մելիք Պէկլարի Ն։ Եորքի Հ։ Հ։ Յանձնախմբին շրջաբերական ծրագրին անդրադարձերէն մէկ քննադատութիւնն 25 Յուլիս 1891 թուակիր, որ նոյն Միութեան անդամոց վեցին ըստորագրութիւններն կը կրէ, իսկ ուրիշ վեց անդամներու անուններն ևս արուած են, «որոց գրուած է,» կ'ըսէ շրջաբերական ծանօթութիւն մի, «Բայց դեռ ստորագրած չեն։»

Ահաւասիկ այդ քննադատութեան փոքր ինչ համառօտեալ թարգմանութիւնն։—

Անցեալներ շրջաբերական նամակ մի և Ծրագիր մի ի ձեռն միոյ յանդամոց Կալկաթայի Հայկական Ընկերակցութեանս դրուեցաւ Ընդհանուր Ժողովոյն առջև, որ տեղի ունեցաւ ի 17 Յունիսի, և որովհետև յայնժամ ժամանակ չկար զգուշութեամբ թարգմանելոյ ի տեղեկութիւն հայերէնի անգէտ անդամակցաց, և զի, եթէ թարգմանուէր իսկ, բաւական ժամանակ չկայր վիճաբանութեան նիւթ ընելու զայն, յղեցաւ առ Ազգային Բաժին Ընկերակցութեանս առ ի նկատառութիւն և տեղեկացութիւն։

Ծրագրին հաւատարիմ թարգմանութիւնն կուտամք ներկայ թղթոյս կից (տես Յաւելուած Ա։։)

Ծրագրին Գ։ յօդուածն է քան զամենայն կարևորը, որով կ'առաջարկուի որ ամէն հայ դաղթականութիւն կամ Հայկական ընկերակցութիւն 10 ընտրելիներ որոշէ որոց մէջէն կեդրոնական Յանձնախմբի երեք անդամներն ընտրուին։ Յայտնի է թէ, եթէ այս տասն մարդիկ անծանօթ են արտաքոյ իրենց փոքր դաղթականութեան, մեծագոյն թիւն քուէից զոր կարելի է նոցա շահիլ՝ պիտի լինի հաւատար այդ փոքր դաղթականութեան քուէարկու անդամոց թուոյն և այն անխորշելի հետևութեամբ որ մեծ դաղթականութեանց ընտրելիներն պիտի շահին մեծամասնութիւն, այսինքն Կ։ Պոլսէն յղուած անուանք, քանզի հոն է Հայերու մեծագոյն բազմութիւնն

Բայց որովհետև Ծրագիրն չհարկադրեր զդաղթականութիւնն իրրև ընտրելի նշանակելու իրենց իսկ անծանօթ անդամներն, տեսնենք ի՞նչպէս կը լինի եթէ քուէարկութիւն կատարենք հանրածանօթ անհատներու վերայ։

Այն մարդիկ որոց անուանք ծանօթ են Հայոց ընդհանուր աշխարհ, սակաւաթիւ են, ա՛յնքան սակաւաթիւ զի դժուար է տասն հոգիներ դտնել անառարկելի, կամ որք կարենան նուիրել զանձինս ազգային գործոյն։ Հաւանական է թէ Խրիմեան Հայրիկ կամ Տիար Մինաս Չերազ յօժարին տեղաւորիլ ուր որ իրենց միւս պաշտօնակիցք ուզեն, օրինակի համար ի Նիւ Եորք (ըստ որում այդ քաղաք, որքան որ կրնամ տեսնել, պիտի լինի կեդրոնանիստ) և 1500 թալէռի թոշակի համար թողուն իրենց ուրիշ գործերն։ Եւ զիսուք թէ այնպէս ընեն, կը հարցնեմ թէ ի՞նչ առաւելութիւն կ'ունենայ այդ յօդուտ ազգային գործոյն։ Եւ ի՞նչ հաւանականութիւն կայ որ այս ինչ ընկերութեան ընտրելի՝ եղող նշանաւոր անձն՝ ընտրելին լինի նաև ուրիշ այնքան ընկերութիւններու որ կարենայ նա գտնուիլ ի համարի քան զամենայն աւելի քուէ շահող առաջին երեքին։

Եւ դարձեալ, ի՞նչ գիտենք կամ ի՞նչ կրնանք գիտնալ այդ նշանաւոր ընտրելեաց քաղաքական գաղափարներուն վերայ, որպէս զի ըստ այնմ յանձնեմք ի ձեռս նոցա մեր քաղաքական կամքն։ Յորչափ դաղթականութիւնք և ընկերակցութիւնք ազգային դատին վերաբերութեամբ կարծիք փոխանակած չեն, անկարելի է որ ոև իցէ երեք հոգի, որքան և նշանաւոր, գործեն յանուն դաղթականութեանց և ընկերակցութեանց։

Ինչ որ կարելի է, և որ կարծեմ շատ օգտակար հաստատութիւն մի կրնայ լինիլ, թէև աւելի համեստ քան զոր Ծրագիրն կ'առաջնորդէ, է հաստատութիւնն Լրոց կեդրոնական գործակալութեան մի և ազգային քաղաքական թերթի մի Ցբռանսերէն, Անդղլերէն և Հայերէն, որոյ սիւնակք բաց լինին թղթակցութեանցն ամենայն ընկերութեանց և դաղթականութեանց։ Թերթ մի, որ անկողմնակալ ոգւով խօսք տայ ամեն երանդէ քաղաքական կարծեաց որ բաղձայ երեւիլ յէջս իւր։ Թերթն այսպէս կը հանդիսանայ միջավայր մի յորում ազգային ինդիրք հրապարակային քննութեան կ'ենթարկուին՝ մեր համասիւռ հայ-

րենակցաց մէջ կարծեաց համաձայնութիւն յառաջ բերելու նպատակաւ, և վերջապէս կարելի կը լինի ազգային համոզումներն որոշապէս ձևակերպել: Այսպիսի թերթ մի լինելով հասարակաց ամենայն ընկերակցութեանց և գաղթականութեանց որք պիտի ապրեցնեն զայն, նորա խմբագրերն չպիտի կրնան իրենց անձնական տեսութիւնն ջատագովել երկար խմբագրականներով, այլ իրենց եւս տեսութիւնք պիտի երևին իրենց թղթակցաց տեսութեանց հետ միևնոյն մակարդակի վերայ:

Առ այս նպատակ հարկ չկայ քուէարկութեան, ըստ որում Անգղիերէն և Ֆռանսերէն լեզուաց համար այնքան բազմաթիւ չեն մեր ձեռնհաս խմբագրեր՝ յօժար իրենց բոլոր ժամանակն նուիրելու 1500 թալէռ տարեկանի մի համար: Գալով հայերէնի խմբագրին, պիտի թելադրեմ որ — առանց այժմու խմբագրերու եղանակներն պարսաւելու կ՚ըսեմ — այսպիսի համաշխարհային թերթ մի չորդեգրէ ո և իցէ մին այն ապականեալ և խառնադեղի աշխարհաբարներուն յորս հայերէնն անկեալ է: Մեծ ցաւ է ինձ տեսնել զի հայրենասէր Հայեր կը գործածեն լեզու մի որոյ ռամկութիւնն կը ծառայէ յաւերժացունելու գլխաւոր մեր վաթարայուցիչ հարստահարողաց: Մաքուր հայերէնն նոյնքան դիւրիմաց է և շատ աւելի ընդարձակ շրջանի մի մէջ հասկանալի:

ՅՈՎՍԷՓ ՏԱՎԻՏԻՉ ՄԷԼԻՔ-ՊԷԿԼԱՐ
Նախագահ
ԱԶԳԱՅԻՆ ԲԱԺՆԻՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ Ի ԿԱԼԿԱԹԱ:

ՊԱՏԱՍԽԱՆ

ՀԱՅ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱՑ ՅԱՆՁՆԱԽՄԲԻՆ Ն. ԵՈՐՔԻ

202 W. 23 th St. New York
17 Օգոստոս 1891

Մեծապատիւ Տիար
Նախագահ Ազգային Բաժնին Հայկական Ընկերակցութեան Ի ԿԱԼԿԱԹԱ

Խորին գոհութեամբ ընդունելով զօրինակ շրջաբերականին յորում քննադատած էք զԾրագիր Յանձնախմբիս, պատիւ ունիմք Ձեր գիտողութեան յանձնել զներկայ պատասխանագիրս:

ՆԱԽ, մեր Ծրագիր կը տրամադրէ որ քուէարկութեան մասնակցին ամենայն Հայք բայց ի Թրքահայոց: Յօդ. Գ. կ՚ըսէ. «Հայոց Կեդրոնական Յանձնախմբի անդամք պիտի ընտրուին Հայ Գաղթականութեանց քուէարկութեամբ, որում պիտի մասնակցին Եւրոպայի, Եգիպտոսի, Հնդկաստանի, Ամերիկայի, Պարսկաստանի, Ովկիանիոյ և՝ եթէ կարելի լինի Ռուսիոյ եւս՝ Հայք:» Տաճկաստանի Հայերն դուրս թողած եմք այն յայտնի պատճառաւ որ առ այժմ անհնար է այսպիսի քուէարկութիւն կատարել տալ այն երկրին մէջ ուր ոչ միայն դաւմարմունք արգիլուած են այլ և թղթակցութիւնք կը բռնաբարուին, և ուր այսպիսի ձեռնարկի մի մասնակցողներն դժընդակ պատժոց և աքսորի պիտի դատապարտուէին: Թող որ, ինչպէս դիտել տուած էք, ամէն տեսակ անկարգութիւնք և խարդախութիւնք եւս կրնան մուտ գտնել ի քուէարկութիւն և բոլորովին փճանել ձեռնարկին:

Ուրեմն վտանգ չկայ որ «Կ. Պոլսէն յղուած անուանք» չհասին մեծամասնութիւն, քանի որ անտի ո և իցէ անուն չպիտի յղուի:

ԵՐԿՐՈՐԴ, թոյլտուութիւն կը խնդրեմք դիտել տալու թէ մեք երբէք զՆիւ Եորք իբրև կեդրոնանիստ նշանակած կամ թելադրած չեմք. վասն զի տրամակեդրոն քաղաք մի կեդրոն ընել փորձելու գաղափարէն հեռի եմք: Արդէն Լոնտոն յիշուած է ընկերակցութեանց ոմանց կողմանէ, և հաւանական է թէ կեդրոնական Յանձնախմբին անդամք այդ քաղաքն ընտրեն իրենց բնակավայր իւր ակնյայտնի յարմարութեանց համար: Բայց եթէ զԼոնտոն չընտրեն, կը մնան դեռ ուրիշ յարմար տեղեր, ինչպէս Փարիզ, Գահիրէ և այլն:

ԵՐՐՈՐԴ, Յանձնախմբիս բաղձանքն ոչ թէ նոր կուսակցութիւն կամ ընկերութիւն մի կազմել է, այլ արդէն գտնուած գործիչներն ի մի կեդրոն միացունել գաղթականութեանց քուէից զօրութեամբն, այնպէս որ նոյա միութեամբ կազմեալ մարմինն ներկայացունէ զՀայ Գաղթական Աշխարհն, և անկէ ընդունի իւր թոշակ: Արդէն հանրածանօթ հանդիսացած գործիչք կամ կուսակցութեանց պետք են Տ. Տ. Կ. Յակոբեան, Մ. Ջերազ, Մ. Սրվանձեան, Մ. Փորթուգալեան և Հնչակ: Եւ որովհետև Փարիզու և այլ Յանձնախմբոց կողմանէ արդէն առաջարկուած է որ Ծրագիրն բարեփոխուի և փոխանակ երեքի հինգ անդամներ ընտրուին Կեդրոնին համար, Յանձնախումբս կը պարտի այդ կէտ ընդունիլ և ըստ այնմ կը ջանայ վերոյիշեալ հինգ գործիչներով կազմել տալ կեդրոնն: Արդէն դոցա երեքն հաւանած են իբրև ընտրելի ներկայացուելու և յուսամք թէ միացեալ երկուքն եւս պիտի հաւանին:

ՉՈՐՐՈՐԴ, թէև այդ գործիչներու քաղաքական գաղափարք անծանօթ չեն Հայ Գաղթական Աշխարհին, վասն զի իւրաքանչիւր ի նոցանէ խմբագիր է, սակայն Յանձնախումբս քուէարկուաց կատարելապէս ծանօթացունելու համար այդ գործիչներ, կը պատրաստուի ընդհանուր ընտրութեանց ժամանակին Գաղթականութեանց և ընկերութեանց յղելու տետրակ մի ուր զոյգ ընդ բարեփոխեալ Ծրագրին, պիտի գտնուին այդ գործիչներու կենսագրութիւնք և նոյա իւրաքանչիւրին քաղաքական — ազգային դաւանանքն: Այսպէս պիտի կրնայ մէն մի քուէարկու գիտնալ թէ որո՞ւ և ի՞նչ քաղաքականութեան ի նպաստ կուտայ իւր ազատ քուէն:

Կը տեսնէք, Մեծ. Նախագահ, թէ այն կէտեր զորս խրատամբ կը թելադրէք, Յանձնախմբիս կողմանէ լուրջ հոգածութեան նիւթ եղած են, և ձեռք առնուած են բոլոր այն միջոցներն որք վերջնական ընտրութեան պիտի տան ամենայն բաղձալի և գործադրելի կանոնաւորութիւն:

Գալով այն խնդրոյն թէ արդեօք այսպիսի կեդրոնացում մի փորձելու ժամանակն հասա՞ծ է թէ դեռ հարկ է նախապէս կարծիքներն համաձայնեցունել, Ձեր ուշադրութիւն կը հրաւիրեմք այն ամեն անկարգապահ շարժմանց, այն կեղծանուն հանդանակութեանց, այն խաբէական գինուորագրութեանց, այն յեղափոխական տարաժամ ցոյցերու, այն ոճրագործական միջոցներու որովք կուսակցութիւնք ոմանք կը կարծեն ազգին փրկութեան սատարել, և կը համարձակիմք ըսել, Մեծ. Նախագահ, թէ այլ եւս ներելի չէ Հայ Գաղթական Աշխարհին այսպէս թողուլ որ անփորձ և յանդուգն ոմանք շարունակեն կողոպտել գործաւորներն, պատիր յոյսեր ներշնչել պարզամտաց, և այնպիսի ձախող ցոյցեր ընել որոց միակ արդիւնքն է գրգռել Տաճիկ Կառավարութիւնն ընդդէմ Հայ ցեղին և նուազեցունել Ռուսիոյ եւ Եւրոպեան Պետութեանց համակրութիւնն առ մեր Ազգն:

Ուրեմն կ՚աղաչեմք զՁեզ, Մեծ. Նախագահ, և Ձերք զՀայկական Ընկերակցութիւնդ որ ի Կալկաթա, աջակցել մեր խոնարհ ջանից, խորհուրդ և ոյժ տալ ի յաջողութիւն այն ձեռնարկի, որոյ միակ նպատակն է վերջ տալ անկարգութեանց որքան հնար է, և միանգամայն յառաջ բերել այն ընդհանուր միութիւն և կեդրոնացումն դրամական և իմացական զօրութեանց առանց որոյ ունայն պիտի լինին ամենայն զոհողութիւնք եւ աշխատութիւնք:

Խնդրելով, Ազնիւ Նախագահ, որ Հնդկաստանի գաղթականութիւններն Ձեր Ընկերութեան միջոցաւ պատրաստէք ընդհանուր ընտրութեան մեծ աւուրն համար, և ընդունիք մեր շնորհակալիք և յարգանք,

Մնամք ի դիմաց Ն· Ե· Հ· Հ· Յանձնախմբին

Ատենադպիր Ատենապետ

Յ· Կ· ՀԻՒՐՄԻՒԶ Գ· ԳԱՍՊԱՐԵԱՆ

Կնիք ՅԱՆՁՆԱԽՄԲԻՆ

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Լոնտոնի «Daily Chronicle» թերթին Օգոստ· 1ին թուոյն մէջ կը կարդամք հետեւեալ տողերն·

«Հայ հայրենասէրք ժամանակէ մ'ի վեր յղացեր են այն գաղափար թէ բան մի կը պակսի սիրտ և յոյս տալու համար իրենց հայրենակցաց որ ի սփիւռս աշխարհի, բան մի՝ լաւագոյն քան զվաղանցիկ և յախուռն բացատրութիւնն եռանդուն բայց անկարդ համակրութեան: Եւրոպեան և Ամերիկեան Հայ Գաղթականութիւնք, որք օր ըստ օրէ կը ստուարանան նոր փախստականօք յերեսաց անիշխանութեանն որ կը տիրէ Հայաստանի մէջ, որոշած են կազմել Համահայկական միութիւն մի (a Pan—Armenian Seague,) Գործադիր Խորհրդոյ կեդրոնն լինելով ի Լոնտոն: Այս ծրագիր արդէն ընդունած է հաճութիւնն և համամտութիւնն Տիար Կ· Յակոբեանի, Նախագահին Հայոց Հայրենասիրական Միութեան: Այս տիեզերական Միութեան նպատակն պիտի լինի հաւաքական ազդու ճիգեր ընել ի գործադրութիւն դաշնագրական իրաւանց Հայոց, նախանձաւորութեամբ պահպանել Ազգային Եկեղեցւոյ շնորհուած մենաշնորհներն, և յառաջ տանիլ զարեւմտեան քաղաքակրթութիւնն ի Հայաբնակ Գաւառս: Կեդրոնն իւր գործոց և ծախուց համար պատասխանատու պիտի լինի Ընդհ· Ժողովոյ մի:

ԿԱՐԱՊԵՏ ՅԱԿՈԲԵԱՆ

Հայ Ազգն Օսմանեան Գահուն փարած էր հաւատարմութեամբ մ'այնքան խորին և անկեղծ՝ զի դժնդակ հարստահարութեանց դէմ գանէ առ Բ· Դուռն բողոքել չէր ուզեր, այլ կը շատանայր պատրիարքական թագրիրներ մատուցանելով մասնաւոր խնդիրներու և դէպքերու առթիւ: Հայաստանի մէջ գործուող բռնութեանց և պաշտօնական անիրաւութեանց դրութեանն դէմ գանգատիլ և կարգ մի ընդհանուր բարեկարգութիւններու գործադրութիւնն առաջարկել Դրան՝ տեղի ունեցաւ 1872ին առաջին անգամ: Նոյնպիսի խնդիր մի, նմանապէս հարստահարութեանց տեղեկագրով հանդերձ, երկրորդ անգամ ներկայացուեցաւ Դրան 1876ին: Ըսել է Խրիմեան Հայրիկի պատրիարքութեան օրով սկսած է Հայ և Թուրք պաշտօնական յարաբերութեանց այս նոր շրջանն:

Այդ երկու տեղեկագրեր յայտնի կը ցուցնեն Հայ հայրենասիրաց մէջ նոր ըմբռնումն ազգային կացութեան և նոր իղձ մի Հայաստանի ապագային նկատմամբ: Բայց Ազգային Ժողովն իւր նախագահի կամ իւր պատրիարքութեան ձեռքով Բ· Դրան կը մատուցանէ իւր խնդիր որ դեռ բողոքոյ երեւոյթ չունի, և անոր կը սպասէ դարման: Դեռ եւս օտար պետութեանց դիմելու խորհուրդն յղացած չէ, դեռ Հայկական Խնդիր չկայ:

«Հայկական Խնդիրն» Հայկական Աշխարհէն դուրս, Եւրոպացւոց և Եւրոպեան հանրային կարծեաց մէջ նախապէս յղութիւն առած խնդիր մ'է· և այն անձն որ այդ խնդրոյ սերմն սերմանել սկսաւ Եւրոպեան կարծիքին մէջ, կը կոչուի ԿԱՐԱՊԵՏ ՅԱԿՈԲԵԱՆ: Նա խօսեցաւ Բերայի մէջ, անգղիերէն լեզուաւ և Անգղիական Ընկերութեան մ'առջեւ «Հայաստանի և Նախկին Հայոց» վերայ 1870 Ապրիլ 30ին, և կարծեմք թէ իւր ատեանին մէջ առաջին բանախօսութիւնն է որ երբէք Հայ մի ըրած է Եւրոպացւոց:

Տիար Կ· Յակոբեան 1866ին կարգուած լինելով դրագէտ Բերայի Անգղիացւոց Ուսումնական և Գրագիտական Թանգարանին (British Siterary and Sciertific Institution) Անգղիական Գաղթականութեան մշակեալ դասուն հետ շարունակ ի յարաբերութեան էր և առիթ ունէր տեսնելու թէ Եւրոպացիք որքան անգէտ էին Հայ ժողովրդի և Հայ հայրենեաց մասին: Արդարեւ յայնժամ Կ· Պոլսոյ Եւրոպացիք աւելի Բողոքական և Հռովմէական Հայոց վերայ փոքր ի շատէ տեղեկութիւն ունէին բայց ազգին բովանդակին գրեթէ անծանօթ էր նոցա և չէր գրաւած Եւրոպացւոց ուշն: Հայազգի Գրագէտին անկ է ուրեմն պատիւն սկզբնաւորած լինելոյ այդ գործ, այսինքն Հայ Ազգն, նորա անցեալ փառքն և այժմու անտանելի կացութիւնն ծանօթացունելոյ Եւրոպացւոց մամլոյ միջոցաւ· վասնզի այդ առաջին բանախօսութենէն յետոյ սկսաւ Գրագէտն յօդուածներ հրատարակել Պոլսոյ անգղիերէն թերթերուն մէջ և Եւրոպացւոց ուշադրութիւնն հրաւիրել Հայոց վերայ: Կ· Պոլսոյ Անգղիական ասպարէզն անձուկ շրջանէն դուրս ելնելով ուզեց Անգղիական բոլոր ազգին խօսիլ: Անգղիացւոց և Անգղիերէնի այնքան ծանօթ լինելով՝ 1874ին գնաց հաստատուեցաւ ի Լոնտոն, ուր ներկայացուեցաւ և ծանօթացաւ բարձրաստիճան պաշտօնէից և «Թայմզ»ի խմբագրապետին: Այն թուականէն ի վեր մինչեւ ցայսօր նորա մասնաւոր գործն եղած է Լոնտոնի ազդեցիկ թերթերուն մէջ գրել Հայոց վերայ:

1876ին Անգղիական ոստանին մէջ կազմուեցաւ առաջին Հայկական Յանձնախումբն 3 Հայ և 2 Անգղիացի անդամօք, որոյ ընդհանուր քարտուղարն էր Տ· Յակոբեան: Հարստահարութեանց տեղեկագիրն զոր Ազգային Ընդհ· Ժողովն 1872ին և 1876ին մատուցած էր Բ· Դրան, անգղիերէնի թարգմանելով հրատարակեց: Նոյնպէս հրատարակեց այն ա՛ղեկագիրն որ ի Կ· Պոլիս պատրաստուած և Լոնտոնի Յանձնախմբին Նախագահ Սէթ Ապգարի անուամբ յղուած էր Մեծ Պետութեանց: 1877ին ըսկիզբն Լոնտոնի Հայոց կողմանէ պատուիրակութիւն մի ներկայացաւ «Eastern question Association» կոչուած ընկերութեան, և յիշատակագրով մի բողոքեց իրենց խնդրոյն շրջանէն Հայաստանի դուրս թողուած լինելուն դէմ: Այդ ժամանակէն է նաեւ որ Մր· Ճէյմս Պրայս միջամտեց Հայկական Խնդրոյն՝ Տիար Յակոբեանի աշխատակցելով ի պատրաստել յիշատակագիրն որոյ օրինակն հրատարակեցաւ «Թայմզ»ի մէջ:

Ուրեմն 1873ին Հայ Պատուիրակութեան ի Պէռլին առաքումէն առաջ Տիար Յակոբեան գլխաւոր գործիչն եղած էր Եւրոպայի մէջ կարծիք ստեղծելու Հայոց պահանջմանց ի նպաստ: Իւր յօդուածներէն բաւական մեծ թիւ մի, հանդերձ այլոց ոմանց ընտիր թղթակցութեամբք, ի մի հատոր ամփոփած հրատարակեց «Հայերն և Արեւելեան Խնդիրն» անուամբ, որոյ տպագրութիւնն 1878ին Ապրիլ ամսոյ մէջ լրացունելու՝ օրինակներն մատոյց Լորտ Պիքընսֆիլտի և Լորտ Սալզպէրիի: Այս տեղի ունեցաւ նախ քան զժամանումն Խրիմեան Հայրիկի ի Լոնտոն: Այդ հաւաքածոյի սկիզբն ներածական երկար յօդուած մ'ունի Տիար Յակոբեան, յորում խնդիրն ընդհանուր կերպով կ'ուսումնասիրէ, Հայաստանի աշխարհագրութեան, Հայ ցեղին յատկութեանց և ընդունակութեանց վերայ կը խօսի, և կը բաղդատէ Հայկական Խնդիրն Պուլկարականին հետ՝ ցուցնելով թէ Հայք նոյնքան արժանի և աւելի կարող են ինքնավարութեան: Հայք «Եւրոպայի կը դիմեն, կ'ըսէ, ոչ պարզապէս վասնզի շահագրգիռ և հարստահարեալ ժողովուրդ մ'են... այլ վասն զի արգիլուած են նոքա իմացական յառաջդիմութեան մասին իրենց ընդունակութիւններն օրինաւորապէս գործածելէ...: Նաեւ քաղաքակիրթ ազգաց կոչում կ'ընէ նոքա, քանզի գիտեն թէ ինչ կը նշանակէ քաղաքակրթութիւն, և քանզի բաղձացող են հետեւելու քաղաքակրթութեան շաւղին առ ի զարգացունել զբարոյական և զնիւթական վիճակ իւրեանց հայրենեաց: Նոցա պատմութիւնն կ'ըսէ նաեւ իրենց թէ իբրեւ ազգ որքան աշխատած են վասն քրիստոնէութեան և վասն քաղաքակրթութեան անցեալ դարուց մէջ և թէ հետեւապէս ինչեր կրնան ընել յայժմուս եւս ի կրթութիւն և յառաջացումն զիրենք շրջապատող ցեղից և ժողովրդոց:

Նոքա Արևմտից կոչում կ'ընեն քանզի գիտեն թէ իրենց շաՀն Արևմտեան Ասիոյ շաՀն է»: Տիար Յակոբեան կը վերջացունէ իւր պատուական ներածականն՝ ի մէջ բերելով Անգղիացի Հեղինակի մի սա խօսքերն. «Միթէ այս Հնագոյն քաղաքակրթութիւնն, այս մաքրագոյն եկեղեցին, այս բարձրագոյն ազգային կեանքն, այս պատմական ժողովուրդն Հայոց պէտք է ընկղմի՞...: Ի Հայաստան (ինչպէս ի Պուլկարիա, ի Պոսնիա և ի Յունաստան) քան ամենայն լաւ բանն է վերաՀաստատումն այն անկախութեան որում ոչ մի այլ ժողովուրդ այնքան յարմար է կամ այնքան փափաքելի իրաւունք ունի որքան Հայք:»

Տիար Յակոբեանի յօդուածք անթիւ են, և նորա ազգային գործունէութեան պատմութիւնն ալ յոյժ երկար կը լինի գրել սա ամբողջ. սակայն ինչ որ ըսինք այս Համառօտ կենսագրութեամբ՝ բաւական է ցուցնելու թէ նա արդարև 21 տարիէ ի վեր ազգային նշանաւոր և բազմաշխատ գործիչ մ'է առանց թոշակի, և թէ բոլոր Հայ ազգն երախտապարտ է նմա: Կարծեմք Համարձակ կրնամք ըսել թէ Յակոբեան է մին ի ծնողաց Հայկական Խնդրոյն, և երբ Հայ Գաղթական Աշխարհն կեդրոնական մեծ Յանձնախումբն կազմելու Համար քուէարկէ, պիտի երախտագիտութեամբ անցունէ այդ բազմերախտ աշխատաւորի անունն իւր ընտրելեաց ցանկին մէջ:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՀՐԱՒԷՐ

Տիար Մելիք-Պէկլար Կեդրոն մի Հաստատելու ձեռնարկն փողՀաս գտնելով՝ կը թելադրէ որ «ազգային քաղաքական թերթ մի Հիմնարկուի Փռանսերէն անգղիերէն և Հայերէն, որոյ էջք բաց լինին ամենայն գաղթականութեանց և ամենայն ընկերակցութեանց թղթերուն, և ուր կարենան ամէն քաղաքական կարծիք անխտիր Հրատարակուիլ:»

«Հայք»ի Խմբագիրն իւր թերթ Հիմնած է ոչ որպէս զի իւր անձնական կարծիքներն միայն Հրատարակէ, այլ իւր նպատակն եղած է բաւեն բարձրագոյն ներշնչութեամբն անխտրական և անկողմնակալ գործի մ'ընել զայն՝ լայնարաց ամէն տեսակ քաղաքական —ազգային կարծիքի և կուսակցութեանց առաջի: Կը կարծէինք թէ յառաջագոյն յայտարարելու պէտք չունէինք քանի որ թերթին ընթացքն և ոգին բաւական կը յայտարարէին զայն, բայց այս առիթն ձեռք կ'առնումք ամենայն գաղթականութեանց միանգամ ընդ միշտ ծանուցանելու թէ «Հայք» բաց է անոնց գրչին Համար անգամ որք խմբագրին անձնական կարծեաց տրամագծօրէն Հակառակ կարծիք կը բաղձան ջատագովել:

Մեք «Հայք»ն չպիտի Հիմնարկէինք եթէ արդէն գտնուէր թերթ մի որ անկողմնակալ կերպիւ ընդունէր և Հրատարակէր մեր տեսութիւններ: «Հայք» ո և իցէ կուսակցութեան, ո և իցէ ընկերակցութեան բերանն չէ, այլ իւր ջերմ բաղձանքն է լինիլ բոլոր խորՀող և մըտածող Հայրենակցաց բերանն:

Բանիմաց Հայրենակցաց և ընկերակցութեանց մէջ կարծիք փոխանակելու նուիրուող թերթն միայն Հայերէն լինիլ բաւական է, վասն զի մեր ներքին վիճաբանութեանց և տեսութեանց միջազգային ուշադրութիւն Հրաւիրելու պէտք չկայ:

ՀԱՅՔԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

«ՀԱՅՔ»ի բաժանորդ գրուիլ ուզողներուն կը ծանուցանեմք թէ թերթիս առաջին թիւէն սկսեալ կարող եմք յղել իրենց. նոյնպէս պակասեալ թիւերն կրնամք յղել այն բաժանորդաց որք կը բաղձան ամբողջ տարեկանն կազմել տալ, ինչպէս կը տեղեկանամք թէ շատերուն փափաքն է:

ՀԱՅԱԶԳԻ ՄԵԾ ԶՕՐԱՎԱՐ ՌՈՒՍԱՑ



ԱՐՇԱԿ ՏԷՐ ՂՈՒԿԱՍՈՎ
Մեռեալ ի 20 Յունվարի 1881 ի Հասակի 62 ամաց:
ԱՐՏԱՏՊԵԱԼ Հ. Ղ. ԱԼԻՇԱՆԻ
ԱՅՐԱՐԱՏԷՆ

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Պէրլինի Deutsches Wochenbatt թերթն մեծ յօդուած մի Հրատարակած է Հայոց վերայ, յորմէ Հետևեալ կտորն կ'առնումք «Լ'Արմէնի»ի միջոցաւ:

«Տուէք Հայոց իրաւունք զէնս կրելոյ, և նոքա շուտով ապացոյց պիտի տան իրենց Հին քաջութեան: Արդէն Ռուսիոյ Հայք տուած են այդ ապացոյցներ, այն Հայք որք 50 տարի առաջ նման էին իրենց ԹրքաՀպատակ եղբարց...: Զինեալ Հայեր ուխտի երթալով ի Ս. Կարապետ Թրքական Հայաստանի մէջ, յաճախ փախուցած են Քուրդ աւազակաց խմբեր, այնպէս որ նոքա ըսկսած են ըսել. Ասոնք տարբեր Հայեր են եղեր: Երբ քանի մը տարի առաջ ստիպողական դարձաւ զինուորական ծառայութիւնն Կովկասի քրիստոնէից Համար, 1888ին, այն է երկու տարուան մէջ, Հայերն այնքան նշանաւոր Հանդիսացան որ Զարն իւր պաշտօնակալաց արտայայտեց իւր սքանչանք և շնորՀակալիք: Բաց աստի, բազում Հայեր միշտ գտնուած են իբրև կամաւոր պաշտօնակալ Ռուսական բանակին մէջ, ինչպէս օրինակի Համար այժմիկ զօրավար Ալչապեան ի Թուրքաստան և զօրավար Տէր Աստուածեան Թիֆլիզի, որ, նորադէպ առթի մի մէջ, փառաւորապէս Հրամանատարեց 150 Հազար զօրաց բանակի մի ի Նարվա, ի ներկայութեան Ն. Վ. Կիյոմ Բ. Կայսեր: Եւ ո՞յք էին վերջին ռուսաթուրք պատերազմին գլխաւորներն ի Կովկաս, որոց Կիյոմ Ա. Գերմանիոյ Կայսրն, բարձր կարգի շքանշաններ շնորՀեց — Տէր Ղուկասով, զոր բաղդատեց Մարիոսի Հետ, և Լազարեֆ, Կարսի գլխաւորն, զոր նմանցուց Պլուքէրի: Հայ մի չէ՞ր նաև այն Մատաթով որ, անունն Պարսից արՀաւիրքն լինելէ յետոյ, 182 ին,

երբ բոլոր Ռուս զօրավարք յուսահատեցան Շամլան առնել, հրամանատարութիւնն յանձն առաւ և երեք օրէն ետ խօսքերն ուղղեց Նիքոլա Կայսեր․ Շամլս յառ Ձե՛ր։ Հա՛յ մ՚էր նաև Պայպութով որ, 1854ին, առաւ զԿարս և զԿարին, և մրցեցաւ միայն 6 հազար Ռուս զօրօք ընդդէմ 30 հազար Թուրք զօրաց։ Նիքոլա Կայսրն զարդարեց նորա կուրծքն այնպիսի շքանշանաւ մի որ սովորաբար մեծ դքսերու բաժինն է, այս խօսքն ըսելով․ «Ինչպէս դու զարմացուցիր աշխարհն, և ես ահա զքեզ կը զարմացունեմ»։ Ուրիշ մի, Իշխան Արղութինսքի, տիրեց Կովկասի ցեղից մինչև յայնժամ անպարտելի միացելոց, և ի յիշատակ նորին արձան կանգնեցին ի Տէմիրխանշուրա։ Ամեն մարդ գիտէ Հայ կոմսին՝ Լորիս Մելիքովի՝ անունն, սիրելոյն լուսամիտ Աղեքսանդր Բ. Կայսեր։ Նա հաւասարապէս երևելի էր իբրև քաղաքագէտ ինչպէս իբրև ռազմագէտ, և վայրապար չէ որ իրեն համար բուած է «Լոյս Արևելից»։ Ռուսք ինքեանք կոչեցին զնա Ծիծեռնակն Ռուսիոյ, և սակայն չէր կրնար՝ ինքն միայնակ՝ զգարուն բերել Ռուսաց։ Զայսի խումբ ազնիւ և արի զօրավարաց՝ Բաւկանովի և Շէլկովնիկովի վերայ։ Բոլոր այս մարդիկ էին, բառին բովանդակ նշանակութեամբն, զաւակունքն այդ ոչ-պատերազմիկ ժողովրդեան։ Նոյն իսկ Թրքական Հայաստանի մէջ հարստահարեալք զինուորական քաջութեամբ մրցած են իրենց անկախութիւն պահպանելու համար․ այսպէս 1862ին կռուեցան ի Կիլիկիա՝ ու և է զինուք՝ ընդդէմ Ազիզ Թուրք փաշային, և ես 1878ին, և այսօր իսկ, փայտով ու քարով երբ զէնք չունենան»։

ՊԼՊՈՒԼՆ ԱՒԱՐԱՅՐԻ

Ո՛հ դու բարեկամ այրած սրտերու,
Խօսնակ գիշերոյ, հոգեակ վարդերու,
Երգէ՛ պլպուլիկդ, երգէ՛ ի սրտէդ,
Զանմահ քաջան Հայոց երգէ՛ հոգւոյս հետ։

Թողէի վանուց ձէնիկդ ինձ գիպաւ,
Սրտիկս որ ի խաչն էր կիպ՝ թունդ թռաւ․
Ի խաչին թևէն թռայ ու հասայ,
Գտայ զքեզ ի դաշտ քաջին Վարդանայ։

Պլպուլ, քեզ համար մեր հարքն ասացին
Թէ չէ հաւ՝ պլպուլ մեր Աւարայրին,
Եղիշեայ հոգեակն է քաղցրալբուցիկ
Որ զՎարդան ի վարդն տեսնու կարմրիկ։

Զըմեռն յանապատ կու գնայ կայ ի լաց,
Գարունն յԱրազ գայ ի թուփ վարդենեաց,
Երգել ու կանչել յԵղիշէին ձայն
Թէ պատասխանիկ մ՚արդեօք տա՞յ Վարդան։

Հ. Ղ. Վ. ԱԼԻՇԱՆ

ՆԱՄԱԿ ԿԻԼԻԿԻԱՅԷՆ

(Կիլիկիայէն մեզ ուղղեալ նամակէ մի հետևեալ մասն կը հրատարակեմք։)

Այս կողմերու անսովորական վիճակն տարուէ տարի աւելի գէշ կ'ըլլայ։ Մեծ բազմութիւն չքաւորաց անգործ կը մնայ։ Եթէ գոնէ շրջակայ լեռներուն և գիւղից մէջ ապահովութիւն գտնուէր, քաղաքներն և աւաններն լեցունող անգործներն կ'երթային անցան և անվար պառկած հողերն մշակելու։ Անցեալ գարուն Ճարապալաւսի և Բում Դալաի կողմերն պտըտեցայ, և Օրուլի ու Եփրատայ միջև Պարադ կոչուած յուռթի դաշտն տեսայ, որ գրեթէ անմշակ կը մնայ այժմ, և որ սակայն լաւ մշակուելով կրնայ այժմու քանապատիկն եղող ժողովուրդ մի կերակրել։ Այսպիսի լքեալ հողեր կարի շատ են Եփրատայ հովտին մէջ։ Տրոյ մասին ժողովրդեան բեռն կը ծանրանայ տարուէ տարի։ Հաւաքելու կերպերն ալ հետզհետէ կը խստանան։ Աղքատներուն վերջին վերմակն և բեկ պղնձեղէններն անգամ վաճառելով տուրքերն կը գանձեն։ Հարիւրներ կան բանտարկուած՝ տուրք վճարելու դրամ չունենալով։ Այս խեղճ բանտարկելոց ոչ սակաւք կիսաով կը մնան և կը հիւանդանան։ Իրենց զաւակունք ալ օրերով անօթի կը մնան միւս կողմէն։

ՀԱՅԵՐ ՅԱՄԵՐԻԿԱՅ

ԹԷՍՍԸԼ ԿԱՐՏԸՆ

Անցեալ շաբաթու առիթ ունեցանք այցել զԹէսսըլ կարտըն ուր կը հասնին և կը քննուին օտար երկիրներէ եկող երրորդ կարգի ճամբորդներն։ Թարբերդի գիւղերուն մէկէն եկող երկու եղբարց մին վար դրուած էր հոն, վասն զի աչքերն տկար էին, և պաշտօնէից կողմանէ պահանջուած էր 500ական թոլէրի երաշխաւորութիւնն երկու անձանց, որպէս զի երբ ինք զինք ապրեցունելու անկարող գտնուի այդ գաղթականն՝ կարենայ անոնց ծախուք պաշտպանուիլ և ետ ղրկուիլ։ Պաշտօնեայներէն տեղեկացանք թէ երաշխաւորութիւնն տրըուած չլինելով, այդ գաղթական ետ յղուած էր։

Բայց, ըստ պաշտօնեայն, կան ուրիշ իբր 10 Հայեր այժմ հոս, որք երէկ հասան։ Հաճեցաւ զմեզ առաջնորդել անդր ուր գաղթականաց բազմութիւնն, ամեն երկրէ և ազգէ, լեցուած էին իբրև ի փարախի։ Հայերուն կողմն գնացինք, և ամենն ի քթթելական պաշարեցին զմեզ։ Տեղեկացանք թէ ամենն ալ Թարբերդի կողմէն են, և ամենն ալ այս երկրի մէջ արդէն եղբայր, հօրեղբայր կամ հայր ունին, գրեթէ ամենն ալ իրենց նաւու տոմսակն և Նիւ Եորքէն մինչև Ուսթըր կամ Լինն երթալու ճամբու տոմսակն ստացած ունէին անդստին ի Տաճկաստանէ։ Յայնժամ ըսինք թէ «Զինէ անոնք որ կարդալ գիտեն, թող ձեռք վերցունեն։» Եւ համրեցինք վեց ձեռք։ Միւս չորսին ձեռքերն խլրտած էին բայց վեր վերցուած չէին․ հասկցանք թէ նոքա ես գիտեն քիչ մի կամ կը կարծեն գիտնալ, բայց այնքան քիչ՝ որ չեն համարձակիր ձեռք վեր առնուլ։ Յայնժամ դարձանք մեր քով գտնուող երկու պաշտօնէից և բացատրեցինք մեր քննութեանց արդիւնքն․ թէ այս եկող Հայերուն 100էն 60 կամ 70ն կարդալ գրել գիտեն․ մարդիկն զարմացան այդ աղքատիկ զգեստներու ներքև այդքան գրագիտութիւն գտնելով։ Եթէ կարենայինք այս փոքր խումբ մի Հայերն իբրև նմոյշ առնուլ Թարբերդու դաշտի Հայոց — ինչ որ չենք կրնար ընել — բաւական քաջալերական պիտի գտնէինք բաղդատել զայնս Եւրոպեան ազգաց հետ։ Ռուսիոյ, Սերպիոյ, Ռումանիոյ և Պուլկարիոյ մէջ ժողովրդեան 100էն 20ն միայն կարդալ գրել գիտեն․ Սպանիոյ մէջ՝ 100էն 37ն․ Իտալիոյ մէջ 100էն 52ն․ Հունգարիոյ մէջ 100էն 57ն․ Աւստրիոյ մէջ 100էն 61ն․ Իռլանտայի մէջ 100էն 79ն․ Ֆրանսայի և Պէլճիգայի մէջ 100էն 85ն․ Միացեալ Նահանգաց մէջ 100էն 92ն․ Զուիցերիայի մէջ 100էն 97ն։

Տեսնելով թէ այնքան կարդացողներ կան իրենց մէջ, տուինք երկու օրինակ «Հայք» որպէս զի իրենց ձանձրութիւն փարատեն ընթերցմամբ․ և յոյս առինք թէ նոյն օրն կամ հետևեալ օրն պիտի արձակուին երթալու ուր կամին, բաց ի մէկ հատէն զուցէ, որոյ մէկ աչքն կուրացած էր․ հաւանական է թէ նորա համար ևս երաշխաւորութիւն պահանջէին — այսինքն bond։

Ամերիկայի կառավարութիւնն ստիպուած է այս խիստ զգուշութիւններ ի գործ դնել ընդդէմ գաղթականաց, վասն զի դոցա մէջ յաճախ կը գտնուին անանկներ որք մարմնական, մտաւորական կամ բարոյական խեղութիւններ ունենալով այս երկիրն կը ղրկուին կառավարութեանց կողմէ դաղանի օգնութեամբ կամ ինքնին

կուգան բաղդախնդրութեամբ և ողբմութեամբ ապրելու։ Եթէ այս երկրին իշխանութիւնն անհոգ գտնուի, շատով խելագարներով, ոճրագործներով, կոյրերով, կաղերով, անդամալոյծներով կը լեցուին Միացեալ Նահանգք, ուր, իբրև յաւազանն Պրոպատիկէի, պիտի նստուէին այդ ամենայն, և արդիւնքն պիտի լինէր երկրիս բարոյական վատթարացումն։ Անկէ զատ, հանրային գրքութեան ծախիւք ապրող աղքատաց թիւն ճմլիչ անհամեմատութիւն պիտի ունենար եկամտից հետ։ Այժմ իսկ, միայն Նիւ-Եորք քաղաքն գիրութեան հատատութեանց համար կը վճարէ տարին 4 միլիոն թալէր, այդ գումարի կէսն հանրային հատատութեանց համար եւ կէսն մանաւորաց նախաձեռնութեամբ ստեղծուած հատատութեանց համար։ Հիւանդանոցներու, որբանոցներու, յիմարանոցներու, աղքատանոցներու մէջ միշտ կան իբր 28,000 հոգիք, որոց 14,000ն տղայք և աղջկունք են։ Ասոնցմէ զատ շատեր ալ կը մտնեն և կ'ելնեն քիչ ժամանակի համար։

«Բէսսըլ Կարտըն»ի մէջ կատարուող քննութիւններէն առաջ ուրիշ զգուշութիւններ ի գործ կը դրուին երբ նաւն կը հասնի քաղաքին մօտ. բժիշկներ կան որք զաղթականներն կը տեսնեն, և եթէ հնատիտ, ժանտախտ, ծաղիկ, բորոտութիւն և նման տարափոխիկ սիստերէ բռնուած անհատներ կան, զայնս կը կղզիացունեն կղզոյ մի մէջ, ուր կամ կը մեռնին կամ բոլորովին բժշկուելով թող կը տրուին։ Այդ տեղ ուրեմն իբրև թէ առաջին մաղէն կ'անցնին, և յայտնապէս վատանգաւորներն ետ կը բռնուին։ «Բէսսըլ Կարտըն»ի մէջ ալ խեղերն, հիւանդոտներն, խելագարներն, ոճրագործներն. երեւան հանելու կ'աշխատին, և ըստ վիճակին կամ ետ կը յղեն զայնս անմիջապէս կամ երաշխաւոր կ'ուզեն անոնց ապրուստին համար։ Այս ալ երկրորդ մաղն է որով կը մաղուին զաղթականք։

Մեր հայրենակիցներէն ոմանք այդ օրինական մաղերէն ապահով անցնելէ յետոյ կ'իյնան իրենց ազգայնոց ծուղակն, որպէս ստուգիւ տեղեկացած եմք այլ եւ այլ կողմերէ։ Հայ մի «Բէսսըլ Կարտըն»էն կ'առնու զանոնք կը տանի իր քով, կը պահէ քանի մ'օր, կը կերակրէ, պառկելու տեղ կուտայ, և վերջապէս տոմսակ գընելով զանոնք ճամբու կը դնէ։ Ուսթերի մէջ պատմեց հայրենակից մի թէ 24 թալէրի պահանջ մի ղրկուած էր Նիւ Եորքի Հայուն կողմանէ, իբրև հաշիւն չորս հայրենակիցներու ծախուց որք երկու օր մնացած էին իր քով։ Պահանջն յայտնապէս չափազանց էր, վասնզի, կը մտածեն իւրաքանչիւրն օրն 50 սենթ պառկելու համար եւ մէկ թալէր կերակրոյ համար վճարելով իսկ կը պարտի երեք թալէր առ առաւելն, ոչ թէ վեց թալէր, որպէս կը պահանջուի իւրաքանչիւրէն։ Նորեկներուն խակութենէն ուրեմն անգթարար օգուտ քաղող ԽԱՆՃԻ կայ Նիւ Եորքի մէջ, որ ոչ միայն կը կեղեքէ իւր հայրենակիցներն այլ և անոնց կը կերցունէ չուտուելու բաներ, կը խմցունէ չխմուելու բաներ, և կը պառկեցունէ չը պառկուելիք տեղեր։

«Բէսսըլ Կարտըն»ի անմիջապէս քովիկն կան երկթուղոյ կայարաններ, ուր տոմսակ գնելով կրնան Հայեր ուղղակի երթալ որ քաղաք որ ուզեն, առանց Նիւ-Եորքի մէջ մի քանի օր այնպիսի խեղճութեամբ ապրելու և արեւելքի խաներն դառնապէս միաք բերելու։

ՆՈՐ ՀԱՅ ԹԵՐԹ ՄԻ Ի Կ. ՊՈԼԻՍ

«ՀԱՅՐԵՆԻՔ» Թերթի առաջին թիւն լոյս տեսաւ Յուլիս 13ին, յաջորդելով Մէլիքեանի համանուն լրագրին։ Այս օրագրի Տէր և Տնօրէն է Տիար Յովհաննէս Շահնազար, և խմբագրապետն՝ Տիար Արբիար Արբիարեան, նա իւր լուրջ բնութեամբ և սա իւր ճարտար գրչաւ ծանօթ։ Տարեկան բաժանորդագինն է 300 թիւի համար 100 դահեկան մէճիտ։ Մէկ թիւն 10 փարա։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԱՐՈՒԵՍՏ

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ

21 ԴԱՍ 16 ՊԱՏԿԵՐՕՔ

ԵՒ

ՅԱՒԵԼՈՒԱԾՈՎ

ԱԶԳԱՅԻՆ ՈՒ ՕՏԱՐ ՀԱՏԸՆՏԻՐ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈՑ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Ս. Ս. ԳԱՔԳԹԵԼԵԱՆ

Գին մէկ թալէր կամ հինգ ֆրանգ. ճանապարհի ծախքն հրատարակչին վերայ է. բայց յանձնարարութիւնք չեն կատարուիր եթէ գինն կանխիկ չվճարուի։

Տաճկաստան ղրկուելու օրինակներէն յատկապէս վերցուած է Ազգային Ընթերցուածոց յաւելուածն, եւ եթէ Տաճկաստանի վարժարանաց հոգաբարձութիւններէն խնդրուի, գնէն 100ին 50 զեղչ կը լինի.

ԸՅԼ ԵՒ ԸՅԼՔ

ԳՈՒՄԳԱՓՈՒԻ ՅՈՅՑԻՆ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՀԱՆԴԷՍՆ ՅԱԹԷՆՍ

Հնչակեան մասնախումբ մի Աթէնքն ընտրած է Յուլիս 27ի արիւնահեղ յոյցին տարեդարձն հանդիսաւորապէս տօնելու համար։ Հակառակ Աթէնքի Օսմանեան դեսպանին ծայրագոյն ճգանց և Եւրոպեան ուրիշ դեսպանաց եւս խնդրանաց, Յունական կառավարութիւն չէ կրցած կամ մանաւանդ չէ ուզած այդ հանդէս արգելել։ Բազում կրետացի փախստականներ, ինչպէս նաև Ալպանիացիներ, Մակեդոնացիներ, Եպիւռացիներ և Փոքր Ասիայ այլ և այլ քաղաքներէ Յոյներ, քաղաքին խմբագրական մարմինն և եւրոպական այլ և այլ լրագրաց թղթակիցներ ներկայ էին հանդիսին։ Նուագածութիւններ եւ հայերէն, յունարէն և ֆրանսերէն լեզուաւ հրաշունչ ատենախօսութիւններ լսուեցան. ատենախօսներու մէջ կային Կրետացի նշանաւոր ուսուցիչ մի և եւս կրետական ապստամբութեան պարագլուխն, և «Արեւելեան Դաշնակցութեան» ներկայացուցիչ Տիար Վուլկարիա, որ զհանդէսն փակեց։

Ապա սկսաւ թափօրն, որոյ առջեւէն կ'երթայր նուագածուաց խումբն, որուն կը հետեւէին հայկական և հելլենական դրօշներն։ Ոգեւորեալ և կանոնաւոր դնացիք և «Մեր հայրենիք թշուառ անտէր,» «Աղնիւ ընկեր մեռանում եմ,» և այլ երգեր երգելով կատարեց ընթացքն։

«ՀՆՉԱԿ»

Խմբագրականի մի մէջ յորում կը ցուցնէ թէ ժողովուրդն պարտի չվհատիլ, կը գրէ հետեւեալ տողերն։

«Ժողովրդի վհատութեան մեծ — և շատ մեծ — պատճառ եղաւ մէկ ուրիշ հանգամանք։ Յայտնվեցան այնպիսի անձեր, որ իրենց համար բան ու գործ չինեցին անձնական շահադիտական տեսակէտից խարուսիկ յոյսեր տալ աւելի ճիշդ՝ լրջարար խարել ժողովրդին, թէ այս ինչ օրը (օր. 1890 թ. Մայիս 24, Օգոստոսին Վարդավառի օրը և այլն,) այս ինչ ժամին պէտք է ապըստամբութիւն լինի, թէ սահմանագլխին 50—60 հազար հոգի զինուորուած պատրաստ են ապստամբութեան համար, միայն դրամ է հարկաւոր և քիչ էլ մարդ, թէ բաւական է մէկ երկու շարժում, որ մեր դատը վաստկենք ևն...։»

— 1890 ին Միացեալ Նահանգաց մարդահամարն կատարուեցաւ, յորմէ հասկցուեցաւ թէ բնակչաց թիւն է իբր 62 միլիոն ու կէս։ 1880 էն ի վեր, այսինքն տասն տարուան մէջ, 12 միլիոն ու կէս հոգի աւելցած են։ Նիւ Եորքի բնակչաց թիւն է 1,627000, Շիքակոյին՝ 1,100

000 . Ֆիլատէլֆիային՝ 1,040,000 . Պրուքլինին՝ 930,000 Պալթիմորին՝ 500,000 . Սէն-Լուիին՝ 430,000 . Պոսթոնին՝ 418,000 ։

ԸՆՏԻՐ ՀԱՅԿԱԶՈՒՆՔ

Այս գրքոյկ պիտի պարունակէ 27 ընտիր Հայկազանց նուրբ փորագրութեամբ պատկերն ։ Բաժանորդագրութեան գինն է 4 Փրանք , կանխիկ վճարելի ։ Բաժանորդ գրուիլ ցանկացողք դիմեն հետեւեալ հասցէին , Direction de L'Imprimerie Armenieune, Venise, St. Lazare

ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐ
ԵՒ
ՆԱՒԻ ՏՈՄՍԱԿ

Ութ տարուան փորձառութիւնն կ'ապահովէ հասարակութիւնն թէ մեր փոխանակագրեր են ամենաժան և ապահով Թուրքիոյ ամէն քաղաքաց համար, կեդրոնատեղիք ըլլալով Խարբերդ և Կ. Պոլիս ։ Նոյնպէս կրնամք դրամ ղրկել Եւրոպա ուր որ ուզուի պանգայի միջոցով ։ Նաև գոհացուցիչ գներով տոմսակ կը վաճառեմք Ամերիկայէն Եւրոպա , Եւրոպայէն Ամերիկա ճամբորդելու համար , նոյնպէս Թուրքիոյ ամէն նաւահանգիստներէն գալու և երթալու համար Թրիէսթի ճամբով ։ Նամակներու անմիջապէս կը պատասխանուի ։ Պէտք է դիմել կամ գրել ինձ այսպէս M. S. T. Nahigian, Worcester Mass.

Հ Ա Ն Դ Է Ս   Ա Մ Ս Օ Ր Ե Ա Յ

Տարեկան բաժանորդագինն է 10 Փռանք · վեցամսեայ՝ 6 Փռանք Հայցէն է

Redaction de la Revue Hantess" Au Couvent des R R. P. P. Mechitharistes. VII, Mechitharistengasse., 4 VIENNE. (AUTRICHE.)

ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ
Ի ՆԻՒ-ԵՈՐՔ
Ը Ն Թ Ե Ր Ց Ո Ղ
ՀՐԱՆՏ ՄԵՍՐՈՊ ՔԻՐԷՋՃԵԱՆ

Կրէյս Եկեղեցւոյ նորոգութեանց առթիւ Եկեղեցւոյս պաշտմունք դադար առած են մինչև յառաջիկայ Սեպտ . 20 ։

ՆԵՒՏՈՆ ՄԵՍՐՈՊ ՊՈՅԱՃԵԱՆ
Քարտուղար

IF YOU WISH

TO

ADVERTISE

ANY THING

ANY WHERE

AT

ANY TIME

WRITE

TO

GEO. P. ROWELL & CO.,

No. 10 SPRUCE ST. NEW YORK.

ՏՈՔԹՈՐ Ա. ԱՅՎԱԶԵԱՆ.

Փոխադրած է իւր բնակարան ի թիւ 164 , Արևելք 80 րդ Փողոց , ուր հիւանդ կ'ընդունի առաւօտեան ժամ 8 էն 9 և երեկոյեան ժամ 6 էն 8 ։

TANQUEREY

ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ

63 and 65 W. 14 th St. Corn. Sixth Ave. New York.

Կուզե՞ս ¾ բնական մեծութեամբ մէկ կենդանագիրդ ծրագրչեալ(crayon)*և 12 օրինակ լուսանկար պատկերդ , ՄԻԱՅՆ ՀԻՆԳ ԹԱԼԷՐ ՎՃԱՐԵԼՈՎ . Ներկայացուր զայս կարօն վերոյիշեալ հռչակաւոր արուեստանոցն ։ Վճարումն պիտի ըլլայ հետեւեալ կերպով .*

Երբ նախ լուսանկարդ հանելու համար $2.50
Երբ կենդանագիրդ և լուսանկարքդ առարտին ..2.50

ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐ

Խարբերդ , Տիգրանակերտ , Մալաթիա , Կ . Պոլիս , Տրապիզոն , Մարսիլիա , և Տաճկաստանի ուրիշ քաղաքներ , դրամ կը ղրկեմ ապահով և գոհացուցիչ պայմաններով ։

Դիմել առ Տ . Մ . Շուշանեան
D. M. Shooshan 41 Exchange St. WORCESTER MASS.

H. A. BASSETT
Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն   Կ Օ Շ Ի Կ Ի
259 MAIN ST. WORCESTER, MASS.
Աղէկ ապրանք և աժան ։

LOUIS MULLER
ՎԱՃԱՌԱԿԱՆ ԳԻՆԻՈՑ ԵՒ ԶՕՐԱՑՈՒՑԻՉ ԸՄՊԵԼԵԱՑ
304 WEST 38 th STREET
8դ . Ավինիւին մօտ *Նիւ Եորք*

BUSH & CO
ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ .
Դ Ե Ղ Ա Գ Ո Ր Ծ
(*Հաստատեալ ի* 1849)
56 FRONT STREET WORCESTER, MASS.
Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով ։

ED. LEGOLL, PHARMACIST,
Successor to W. CASWELL,
Pharmacie Francaise,
286 SEVENTH AVE., BET 26 TH & 27 TH STS., N. Y.
ESTABLISHED 1846.
Դեղագիրք կը պատրաստուին խնամով

LANTELME'S
HOTEL & RESTAURANT,
40 UNION SQUARE NEW YORK CITY
16 և 17 *րդ փողոցներու միջև արևելեան կողմն ։*
—Ընտիր Գաղղիական Խոհարարութիւն—
Նախաճաշ 40 և ճաշ 75 սէնթ

PHARMACIE FRANCAISE,
NORBERT FRANCK.
311 7th AVENUE, NEW YORK.
Դեղագիրք կը պատրաստուին խնամով

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն
Մ . Ս . Գ Ա Բ Ր Ի Է Լ Ե Ա Ն